ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

15 հոկտեմբերի շաբաթ 2022
տպագրության ԺԱ տարի

146
(2626)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 113

Չնայած յուրաքանչյուր ելույթի ժամանակ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը շտապում է քննադատել նախկիններին, մասնավորապես՝ Սերժ Սարգսյանին, սակայն նախկինում այլ ուշագրավ հայտարարություններ նույնպես եղել են: Օրինակ՝ 2020 թվականի հունվարին Կապանում վարչապետն իր ասուլիսում անդրադառնում է Սերժ Սարգսյանի թողած բանակցային ժառանգությանը, ուշագրավ գնահատականներ է տալիս: Նա հիշատակում է Սարգսյանի թողած բանակցային ժառանգությունն ու ասում, որ կարող է վերադառնալ դրան. եթե Արցախի ժողովուրդը որոշի՝ սա է ընդունելի տարբերակը, ճիշտ բովանդակությունը, ինքը երաշխավորում է, որ նույն պահին դա կհայտնվի բանակցային սեղանին, ոչ մի պրոբլեմ չենք ունենա: Այսինքն՝ երկու տարի առաջ նա կողմ էր վերադառնալ Սարգսյանի բանակցային ժառանգությանը, սակայն ԱԺ ամբիոնից քննադատում էր Մադրիդյան սկզբունքները, ասում, թե Սերժ Սարգսյանը կապիտուլյացիայի փաստաթուղթ է թողել սեղանին եւ հեռացել: Ստացվում է՝ նա կրկին մոռացել է իր խոսքերը ու մանիպուլացրել հասարակությանը՝ ստելով:

Դեռեւս այս տարվա հունիս ամսին Արցախի Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությունները՝ի դեմս «Արդարություն» խմբակցության ղեկավար Դավիթ Գալստյանի, արցախյան հիմնադրամները քննելու հանձնաժողով ստեղծելու առաջարկով էին հանդես եկել: Գալստյանն ասում էր, որ հատկապես պատերազմից հետո Արցախում գործող գյուղատնտեսական եւ ներդրումային հիմնադրամների գործունեությունը քննելու անհրաժեշտություն կա: Պատգամավորի առաջարկին նախնական 9 պատգամավոր էր միացել, այդ թվում՝ Սամվել Բաբայանի «Միասնական հայրենիք» խմբակցության 1 պատգամավոր: Կարճ ժամանակ անց, սակայն, այդ մեկ պատգամավորը ստորագրությունը հետ էր վերցրել, իսկ Բաբայանի կուսակցությունը հայտարարություն էր տարածել, թե հիմնադրամներում տիրող ֆինանսական վիճակը կքննարկեն սեպտեմբերին: Հիմա արդեն հոկտեմբերն է, ու պարզ է, որ Գալստյանի բարձրաձայնած հարցը Բաբայանի կուսակցության համար ոչ միայն երկրորդ պլան է մղվել, այլ առհասարակ մոռացության է մատնվել: Ավելին՝ «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Արցախի ներդրումների հիմնադրամից «Միասնական հայրենիք» կուսակցության առաջնորդ Սամվել Բաբայանին 100 մլն դրամ է փոխանցվել (մոտ 244 հազար դոլար)՝ ըստ երեւութին Արցախում ինչ-որ ներդրում իրականացնելու համար: Տեղեկացանք, որ վարկը Բաբայանին առանց գրավի եւ լուրջ տոկոսների է տրամադրվել: Մեկնաբանություն ստանալու համար «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց թե՛ անձամբ Սամվել Բաբայանի, թե՛ Արցախի ներդրումային հիմնադրամի հետ կապ հաստատել: «Պրն Բաբայանին կզգուշացնենք, որ լրագրող է զանգել»,- մեզ ասացին Բաբայանի գրասենյակից: Մինչեւ ուշ երեկո այդպես էլ մեզ հետ կապի դուրս չեկան: Ինչ վերաբերում է հիմնադրամին եւ նրա տնօրեն Էռնեստ Գրիգորյանին, ապա տնօրենի հետ կապ հաստատել չհաջողվեց, իսկ հիմնադրամի քաղաքային հեռախոսահամարներից որեւէ մեկը զանգերին չպատասխանեց:

Բարձրագույն դատական խորհրդի նախագահ Կարեն Անդրեասյանի համար հարմարավետ պայմաններ են ստեղծում: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ պաշտոնային դրույքաչափի 50 տոկոսի չափով հավելում կտրամադրվի: Հայաստանի արդարադատության նախարարությունն առաջարկում է Վճռաբեկ դատարանի դատավորներին պաշտոնային դրույքաչափի 50 տոկոսի չափով հավելում տրամադրելու մոտեցումը կիրառել նաեւ Բարձրագույն դատական խորհրդի նախագահիի եւ անդամի նկատմամբ: Արդեն մի քանի օր է, ինչ Անդրեասյանը ԲԴԽ նախագահ է, բայց արդեն սկսել է մտածել ֆինանսական վիճակը կայունացնելու մասին:

Անցյալ շաբաթից Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտում մեկնարկած բողոքի ցույցերից հետո (որի ժամանակ արցախահայությունը տեղական կառավարությունից պահանջում էր ներկայացնել, թե ինչ է լինելու Արցախի ճակատագիրը, եթե հանկարծ Հայաստանի ղեկավարությունը որոշի «խաղաղության պայմանագիր» ստորագրել) Արցախի օրենսդիր ու գործադիր մարմինների ներկայացուցիչներից կազմված պատվիրակությունը Երեւան է եկել՝ պարզաբանումներ ստանալու: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ արցախյան պատվիրակությունն այստեղ գրկաբաց ընդունելության չի արժանացել: Մի քանի օր շարունակ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը կտրականապես հրաժարվել է հանդիպել պատվիրակության ներկայացուցիչներին, չի պատասխանել անգամ հեռախոսազանգերին: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը եւս օրերով չի պատասխանել իր արցախցի պաշտոնակցի հեռախոսազանգերին: Միայն նախօրեին Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանին ընդունեց Փաշինյանը: Ակնհայտ է, որ Փաշինյանն արցախցի պաշտոնյաներից կաշկանդվում է. հավանաբար նրանցից թաքցնելու բան ունի: Արցախի պաշտոնյաներին վերջապես՝ մի քանի օր անց՝ Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը, այնուհետեւ՝ Ռուսաստան կատարած այցից հետո ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանն է ընդունել, ինչպես նաեւ ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը: Նկատենք, որ Արցախի մեր հայրենակիցներն այստեղ՝ Երեւանում, քանի օր շարունակ սպասել են, որ իրենց Հայաստանի գործընկերներից որեւէ մեկը բարեհաճի ընդունել, սակայն չէր ստացվում: Սա թերեւս հենց վերաբերմունք է Արցախի ու արցախահայության նկատմամբ:

ԱՐՁԱԳԱՆՔ

ԱՐՑԱԽԻ ԿՈՐՈՒՍՏ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆԱՉՐԿՈՒՄ

Ադրբեջանագետ Գառնիկ Դավթյանն ասում է, որ Արեւմուտքը շտապում է՝ հնարավորինս արագ կնքվի Հայաստան-Ադրբեջան խաղաղության պայմանագիրը: Նրա համոզմամբ՝ դա ոչ թե խաղաղության, այլ «Նիկոլի ջարդի» դարաշրջանի է մեզ տանելու:

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է ադրբեջանագետ Գառնիկ Դավթյանի հետ:

-Նախօրեին Աստանայում ԱՊՀ երկրների առաջնորդներն են հանդիպում ունեցել, երեկ էլ Ռուսաստանի, Ադրբեջանի, Իրանի նախագահները Հայաստանին ուղղակիորեն վերաբերող հայտարարություններ են արել ոչ միայն արցախյան հակամարտության կամ կարգավորման հետ կապված, այլեւ Հայաստան-Ադրբեջան սահմանի հետ կապված: Հայաստանից մինչ այս պահը արձագանքներ չեն հնչել: Երեկ նախագահների շուրթերից հնչեցրած հայտարարություններին ի՞նչ գնահատական կտաք: Ըստ Ձեզ՝ ի՞նչ են ուզում հասկացնել Հայաստանին:

-Նախեւառաջ պետք է արձանագրենք, որ այսօրվա վարչակազմը փորձում է իր քաղաքական վեկտորը փոխել դեպի Արեւմուտք, հետեւաբար կարծում եմ, որ Ռուսաստանի կողմից նման նախաձեռնությունը՝ կապված նոյեմբերի 9-ից հետո ստեղծված վիճակի հետ, ավելի շատ նպատակ ունի Հայաստանին դեպի ռուսական կողմ թեքելու: Ճիշտ է, արձագանքը ուշացած է, քան նախատեսված էր, սակայն պետք է ընդգծենք, որ արեւմտյան կողմում կա բավական շտապողականություն չակերտավոր խաղաղության պայմանագրի կնքման շուրջ, որովհետեւ Արեւմուտքը նպատակ ունի արտաքին քաղաքականությունն էլ ավելի դյուրացնել ստեղծված աշխարհաքաղաքական խնդիրների շրջանակում, հետեւաբար այս հանդիպումը, ինչպես նշեցի, նպատակ ունի Հայաստանին դեպի ռուսական դաշտ բերելու: Իսկ ինչո՞ւ են դա անում. պետք է նշենք, որ նոյեմբերի 9-ի կործանարար համաձայնագիրը ստորագրվել է հենց Ռուսաստանի նախաձեռնությամբ, դրանից հետո եղել են եւս երկու հայտարարություններ հենց նույն Ռուսաստանի նախաձեռնությամբ: Տրամաբանական է, որ ամբողջ փաթեթի կարգավորումը սկզբնական փուլում գոնե Ռուսաստանի ձեռքում էր, բոլոր մանեւրները՝ Ռուսաստանին այդ գործընթացից դուրս բերելու, ես կարծում եմ, որ կձախողվեն: Այնպես չէ, որ ռուսական կողմը մեզ ավելի լավ տարբերակ է առաջարկում, բայց պետք է չմոռանալ, որ շտապողականությամբ կարող ենք ավելի վատ փաստաթուղթ ունենալ, քան ՌԴ-ն է առաջարկում: Սա՝ մեկ, եւ երկրորդ՝ հաշվի առնելով Ադրեջանի ագրեսիվ քաղաքականությունը եւ Հայաստանի նկատմամբ տարածքների պահանջների շրջանակի մեծացումը՝ պետք է նշեմ, որ արեւմտյան փաթեթում ավելի ոչ հայկական բարենպաստ կետեր կան ներառված, քան Ռուսաստանի:

-Պուտինն Ալիեւի հետ խոսակցության ժամանակ միտք էր հայտնել, թե իրենք շարունակում են ձեռքը պուլսի վրա պահել՝ հասկանալու համար՝ ինչ է կատարվում տարածաշրջանում, Ալիեւն էլ շեշտել էր, որ իրենք անում են հնարավորը Հայաստանի հետ երկարատեւ խաղաղության հասնելու համար: Այս երկու ազդակներից ի՞նչ կարող ենք ենթադրել, ի վերջո, այդ գործընթացը կսկսվի՞ եւ ե՞րբ:

-Նախ՝ պետք է հասկանանք՝ Ադրբեջանի «երկարատեւ խաղաղություն» ասվածը ինչ է նշանակում. կարճ ձեւակերպեմ՝ Արցախի կորուստ եւ Հայաստանի պետականազրկումը, ինչը ենթադրում է 7 անկլավների վերադարձը Ադրբեջանին: Կա կետ նաեւ անհետ կորած ադրբեջանցիների տեղանքի նշում, որը որ հետագայում՝ շատ կարճ ժամանակում, Հայաստանի համար 2 կարեւոր խնդիր կառաջացնի, առաջին՝ միջազգային դատարանի առաջ կանգնել որպես քաղաքացիական անձանց կոտորող պետություն, երկրորդ՝ միջազգային իմիջում Հայաստանը կներկայացվի որպես ցեղասպան պետություն: Եթե Ադրբեջանը խոսում է կառուցողականությունից, ես՝ որպես փորձագետ, առնվազն կարող եմ ենթադրել, որ դա բարենպաստ չէ հայկական կողմի համար, որովհետեւ Ադրբեջանը շուրջ 30 տարի երբեւիցե չի համաձայնել հայկական որեւէ առաջարկի, որը, այսպես կոչված, կառուցողական կլիներ: Վտանգներն ավելի մեծ են, քան դրական ակնկալիքները:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ԱՌԱՋԻՆ ԴԵՄՔԵՐ

ՀՍՏԱԿ ՈՒՂԵՐՁՆԵՐ ԵՆ ՀՂԵԼ

Տարածաշրջանային երկրների ներկայացուցիչներն ու առաջին դեմքերը երեկ, իրար հաջորդելով, հայտարարություններ են տարածել, որոնք ուղղակիորեն են կապվում Հայաստանի հետ: Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում, որտեղ ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի հերթական նիստն էր տեղի ունեցել, Ռուսաստանի, Իրանի ու Ադրբեջանի ղեկավարները խոսել են Հայաստան-Ադրբեջան հարաբերություններից, ինչպես նաեւ Արցախյան հակամարտությունից:

Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը հայտարարել է, որ պաշտոնական Մոսկվան մշտապես է դիտարկում Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ կարգավորման հարցերը: «Բնականաբար, մենք միշտ ուշադրություն ենք դարձնում տարածաշրջանում իրավիճակի կարգավորման հետ կապված հարցերին»,- Ադրբեջանի իր գործընկերոջ՝ Իլհամ Ալիեւի հետ հանդիպման ժամանակ նշել է Ռուսաստանի նախագահը:

Ի հավելումն՝Ալիեւն էլ նշել է, որ Ադրբեջանը տրամադրված է Հայաստանի հետ երկարաժամկետ խաղաղության: «Բաքուն Երեւանի հետ շփումներում բավականին կառուցողական թեզեր է առաջարկել, որպեսզի այդ խաղաղությունը վերջնականապես ձեռք բերվի»,- հայտարարել է Ալիեւը:

Պաշտոնական Թեհրանն էլ երիցս խոսել է Հայաստանի հետ պատմական սահմանների փոփոխման անթույլատրելիության մասին: Իրանի նախագահի աշխատակազմի ներկայացուցիչ Մոհամմադ Ջամշիդիի փոխանցմամբ՝նախագահ Իբրահիմ Ռաիսին Ադրբեջանի նախագահ Ալիեւին հստակ ասել է՝պատմական սահմանների, տարածաշրջանային աշխարհաքաղաքականության եւ Իրան-Հայաստան տարանցիկ երթուղիների ցանկացած փոփոխություն կարժանանա Իրանի վճռական պատասխանին:

«Թեհրանը նաեւ դեմ է տարածաշրջանում ցանկացած եվրոպական ռազմական ներկայությանը»,- հավելել է Ջամշիդին:

Նշենք, որ թե՛ Իրանի, թե՛ Ռուսաստանի նախագահների շուրթերից երեկ հնչած հայտարարություններից եզրակացնել կարելի է, որ նրանց այդքան էլ դուր չի գալիս տարածաշրջանում Արեւմուտքի ակտիվացումն ու իրենց խաղից դուրս մղելու եվրոպական մանեւրումները:

Ս. ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ԿԱՅՑԵԼԻ ՀԱՅԱՍՏԱՆ

Միջազգայնագետ Սուրեն Սարգսյանը հայտնում է, որ առաջիկայում Հայաստան կայցելի Ամերիկայի Կոնգրեսի ներկայացուցիչների պալատի ավելի մեծ պատվիրակություն: Ըստ նրա՝ի տարբերություն Կոնգրեսի ներկայացուցիչների տան խոսնակ Նենսի Փելոսիի գլխավորած պատվիրակության՝ առաջիկայում Երեւան այցելող 7 կոնգրեսականները հայամետ դիրքավորում չունեն, ավելին՝ նրանցից միայն մեկն է հայկական հանձնախմբի անդամ: «Ներկայացուցիչների պալատի ժողովրդավարության գործակցության ձեւաչափի շրջանակներում են կոնգրեսականներն այցելելու Հայաստան: Նրանք այդ ձեւաչափի շրջանակներում են տարբեր երկրներ այցելում, այդ թվում՝ մեր տարածաշրջան»,- ArmLur.am-ի հետ զրույցում ասում է Սարգսյանը: Մեր հարցին՝ինչ «մեսիջով» են նրանք գալիս Հայաստան, արձագանքեց՝որեւէ կոնկրետ «մեսիջ» չկա: Հավելում է՝ նրանց հիմնական ասելիքը ժողովրդավարության զարգացման, պահպանման կոնչով հանդես գալն է. ամերիկացիները բարձր են գնահատում Հայաստանի՝ժողովրդավարության հռչակման ու դրա պահպանման հանձնառությունը: Մեր զրուցակիցը չի կարծում, թե կոնգրեսականների այցին ինչ-որ այլ գործընթաց կհաջորդի, որովհետեւ այդ այցը փոխգործակցության հարթակ է, ու հետագա գործողությունների մասով լուրջ ակնկալիքներ ունենալ պետք չէ:

Ի ՎՆԱՍ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ

«Մենք թերեւս կգնանք Սահմանադրական դատարան դիմելու ճանապարհով,-այս տարվա հոկտեմբերի 4-ին հայտարարեցին 18 հասարակական կազմակերպություններ՝ Վահագն Հովակիմյանի նշանակումը ԿԸՀ նախագահի պաշտոնում խիստ անընդունելի համարելով:- Խստորեն դատապարտում ենք իշխող քաղաքական կուսակցության կողմից ԿԸՀ նախագահի պաշտոնում կուսակցական անդամին նշանակելու մոտեցումը եւ պահանջում ենք վերանայել առաջադրումը… Նրա նշանակումը կլինի ապացույց նեղ խմբային քաղաքական շահի արժեւորման՝ ի վնաս որոշումների կայացման գործընթացում ժողովրդավարական սկզբունքների»: Հանրային կարծիքը խիստ կարեւորող Նիկոլ Փաշինյանի իշխանությունը, սակայն, անտեսեց քաղաքացիական հասարակության կողմից բարձրացված խնդիրներն ու պահանջները՝ Վահագն Հովակիմյանին ընտրելով ԿԸՀ նախագահի պաշտոնում: Պարզվում է՝միայն ՔՊ-ականների հազիվ 65 ձայնով ընտրված Վահագն Հովակիմյանը խախտել է «Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները: Այս մասով եւս ՀԿ սեկտորը նոր հայտարարություն է տարածել եւ դիմել ԱԺ բոլոր խմբակցություններին՝ անհրաժեշտություն համարելով ստեղծել էթիկայի հանձնաժողով՝ քննելու պատգամավորի շահերի բախման ակնհայտ փաստը: Այս առիթով ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, «Պատիվ ունեմ» խմբակցության անդամ Թագուհի Թովմասյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասաց. «Մենք թերեւս կգնանք ՀՀ սահմանադրական դատարան դիմելու ճանապարհով, քանի որ էթիկայի հանձնաժողովի ստեղծումը ոչինչ չի տալու: Այս պահին մեր իրավաբանները աշխատում են դիմումի վրա: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ժողովրդավարական ցանկացած երկրում ամենակարեւոր ինստիտուտներց մեկն է, որի ձեւավորումը չպետք է խնդրահարույց լինի կամ կասկածներ առաջացնի: Եթե Վահագն Հովակիմյանն ինքն իրեն չընտրեր, այդ պահին իրավիճակի դասավորվածությունն այնպիսին էր, որ Վահագնը չէր ընտրվելու ԿԸՀ նախագահ: Նիկոլ Փաշինյանի իշխանությունը հերթական անգամ ապացուցում է, որ միակուսակցական դիկտատուրան իրենց համար առաջին պլանում է, եւ շահերի բախման ակնհայտ դրսեւորումների պայմաններում անգամ նրանք չեն խորշում կուսակցականին դարձնել անկախ կառույցի ղեկավար»:

ՀԱՆԴԻՊՄԱՆԸ ՉԻ ՆԵՐԿԱՅԱՑԵԼ

ՀՀ ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը հոկտեմբերի 14-ի առավոտյան ընդունել է Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի ռեկտոր Կարինե Հարությունյանին:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության հասարակայնության հետ կապի եւ տեղեկատվության վարչությունից հայտնում են, որ ընթացել է կառուցողական բովանդակային զրույց:

Նախարարությունից փոխանցեցին, որ Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի գիտական խորհրդի ընդլայնված նիստին մասնակցելու է ոլորտը համակարգող ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Թռչունյանը: Նախարար Դումանյանը չի կարող մասնակցել նիստին՝ ծանրաբեռնված աշխատանքային գրաֆիկով պայմանավորված:

Հիշեցնենք, որ ArmLur.am-ն հայտնել էր, որ հոկտեմբերի 14-ին Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում նախատեսված էր գիտական խորհրդի ընդլայնված նիստ, որը վերաբերելու էր բուհերի խոշորացմանը եւ, մասնավորապես, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանը եւ Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտը Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանին միավորելու շուրջ հարցի քննարկմանը:

ԱՅԼԸՆՏՐԱՆՔ ՉԿԱ

«Անթույլատրելի եմ համարում, որ ցանկացած հայ ունենա հակառուսական կամ հակաամերիկյան կեցվածք»,- երեկ՝ հոկտեմբերի 14-ին, լրագրողների հետ ճեպազրույցի ընթացքում ասաց Արցախի ԱԳ նախարար Դավիթ Բաբայանը՝ անդրադառնալով Ֆրանսիայի նախագահ Մակրոնի հայտարարությանը, որտեղ նա ՌԴ-ին մեղադրում է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ վերջին բախումները «նպատակային սադրելու» համար:

«Նախ մենք սփյուռքային ժողովուրդ ենք, 3 մլն հայ է ապրում Ռուսաստանում: Այն ապուշը, որ հակառուսական կարծիքներ է արտահայտում, չի՞ մտածում մեր հայրենակիցների մասին, որ կարող է այդ կապը կտրվել: Կամ այն ապուշը, որ հակաամերիկյան է, չի՞ մտածում, որ 2 մլն հայ կա ԱՄՆ-ում: Հետեւաբար Ռուսաստանը մեզ համար բարեկամ երկիր է, Արեւմուտքն էլ մեզ համար թշնամի չէ: Դրա համար մենք չենք տեսնում այլընտրանք ռուս խաղաղապահներին, բայց դա չի նշանակում, որ մենք դեմ ենք Արեւմուտքին: Ես անառողջ եմ համարում այս մեղադրանքները Ֆրանսիայի կողմից Ռուսաստանին. սա մեր գործը չէ: Շատ ավելի լավ կլիներ, որ այդ նույն ժողովրդավարական երկիրը հստակ ասի, որ չի տեսնում ժողովրդավարական Արցախը տոտալիտար Ադրբեջանի կազմում: Սա է ամենակարեւորը, որովհետեւ եթե Արցախի մազը ծռվեց, դա լինելու է խայտառակություն ու խարան՝ իրենց գլխին դաջված»,-ասաց նա:

Դավիթ Բաբայանը նաեւ նկատեց, որ ԱՄՆ-ն միակ երկիրն է, որ դեռեւս կարողանում է Թուրքիային զսպել. «Կանցնի 1-2 տարի, եւ դա կլինի անհնարին, եւ մենք կտեսնենք, որ կրկնվում է նացիստական Գերմանիայի օրինակը, երբ օգնում էին, բայց այդ հրեշը վերջում բոլորին վնաս տվեց»:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

ԵՄ-Ի ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ինչպես հայտնի է, Եվրամիության դեսպանները համաձայնել են Հայաստան ուղարկել քաղաքացիական առաքելություն, որը պետք է տեղակայվի Ադրբեջանի հետ սահմանի երկայնքով՝ վստահությունն ամրապնդելու եւ դելիմիտացիային նպաստելու համար. այս մասին հայտնել է «Ազատություն» ռադիոկայանը: Այժմ արդեն քննարկվում են դրա իրականացման մանրամասները՝ քանիսն են լինելու, որ երկրներից, եւ երբ են ժամանելու Հայաստան:

Փորձենք հասկանալ, թե ինչ կարող են անել նման առաքելությունները, եւ ինչ պրակտիկա է առկա աշխարհում: Նկատենք՝ Եվրամիությունը քաղաքացիական առաքելություն ունի այս պահին 11 երկրներում, այդ թվում՝ հարեւան Վրաստանում՝ 2008 թվականի ռուս-վրացական պատերազմից հետո: Հենց մեր հարեւան երկրի փորձի հիման վրա փորձենք հասկանալ իրավիճակն ու ակնկալիքները:

Վրաստանում առաքելությունը կանգնած է Աբխազիայի եւ Վրաստանի սահմանին մեկ գծում եւ Հարավային Օսեթիայում երկու վայրում: Այստեղ դիտորդական առաքելությունը ժամանել է Ռուսաստանի եւ Վրաստանի կողմից համաձայնություն ստանալուց երկու շաբաթ հետո, եւ սովորաբար պրակտիկա է առկա, որ նրանց ժամանելը երկար չի տեւում:

Ընդգծենք՝ քաղաքացիական առաքելության անդամները չեն կարող իրենք հատել սահմանը եւ պետք է տեղակայված մնան եւ դիտարկումներ անցկացնեն միայն այդ վայրում: Դիցուք, մեր պարագայում առաքելության անդամները չեն կարող անցնել Ադրբեջան, քանի որ կարող են ենթարկվել ագրեսիայի կամ գերեվարվել, ինչպես ՀՀ քաղաքացիները: Նրանք զինված չեն, հետեւաբար չեն կարող այդ առումով ազդեցություն ունենալ, եւ նրանց առաքելությունը միայն միջնորդական է: Օրինակ՝եթե ինչ որ խնդիր է առաջանում, ապա նրանք կարող են զանգել ադրբեջանական կողմին եւ փորձել ընդհանուր հայտարարի հասնել, կարող են հենց սահմանին պարբերաբար հանդիպումներ կազմակերպել երկու կողմերի միջեւ:

Այսինքն՝ այն հանգամանքը, որ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւն ասել է, թե ինքը կաշխատի առաքելության հետ այնքանով, որքան կառնչվի Ադրբեջանին, չի խանգարելու աշխատանքին, քանի որ, այսպես, թե այնպես, նրանք տեղակայելու եմ հենց ՀՀ սահմանին: Առավոտից մինչեւ երեկո նրանք պետք է մշտադիտարկումներ անցկացնեն. եթե խախտումներ լինեն, արձանագրեն դրանք, ոչ ավելին:

Ըստ այդմ, ԵՄ առաքելության նպատակներն են՝

- ապահովել, որպեսզի ռազմական գործողությունները նորից չսկսվեն,
- նպաստել տեղացի բնակչության վերադարձին նորմալ կյանքի, որոնք ապրում են այդ տարածքներում,
- ամրապնդել կոնֆլիկտի կողմերի միջեւ վստահությունը:

Հարեւան Վրաստանում քաղաքացիական առաքելության անդամների թվում ԵՄ երկրների ցանկից մեծ թիվ են կազմում Գերմանիայի ներկայացուցիչները, իսկ Լյուքսեմբուրգից առհասարակ բացակայում են՝ հաշվի առնելով այդ երկրի փոքր լինելը, ինչպես նաեւ այլ առաջնահերթությունները: Հայաստանի դեպքում եւս հստակ չէ, թե քանի երկրից եւ քանի ներկայացուցիչներ կկանգնեն ՀՀ սահմանին եւ քանի ուղղություններով, սակայն մեր դեպքում եւս ուղղությունները մի քանիսը կլինեն:

Հավելենք, որ սկզբնական շրջանում Վրաստանի սահմանին եւս լարված է եղել, սակայն մինչեւ այժմ արտառոց միջադեպեր այլեւս չեն գրանցվել, եւ անգամ Աբխազիայի բնակիչները կամուրջի օգնությամբ կարողանում են գալ Վրաստան. Օսեթիայի համար նոր է հնարավորություն ստեղծվել գալ Վրաստան, սակայն միայն հատուկ օրերի:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԺԱՄԱՆԵԼ Է ԵՐԵՎԱՆ

Եվրամիության՝ Հարավային Կովկասում եւ Վրաստանում ճգնաժամային հարցերով ԵՄ հատուկ ներկայացուցիչ Տոյվո Կլաարը «Թվիթեր»-ի իր էջում լուսանկար է հրապարակել Եվրամիության առաքելության ժամանումից եւ հայտնել, որ ԵՄ դիտորդների առաջին խումբը ժամանել է Երեւան:

«Երեկ ԵՄ դիտորդների առաջատար խումբը ժամանել է Երեւան: 27 անդամ երկրներն արագ արձագանքել են Հայաստանի խնդրանքին:

Տեղակայման նպատակը լինելու է իրավիճակի մշտադիտարկումը եւ տեղում Հայաստանին ու Ադրբեջանին աջակցության տրամադրումը իրավիճակի կայունացման նպատակով»,- գրել է Կլաարը:

Հիշեցնենք՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի, Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի եւ Եվրամիության նախագահ Շառլ Միշելի՝ 2022 թվականի հոկտեմբերի 6-ին կայացած հանդիպման արդյունքներով կողմերը հանդես էին եկել հայտարարությամբ, որում նաեւ նշվում էր, որ Հայաստանը համաձայնություն է տվել Ադրբեջանի հետ սահմանի երկայնքով ԵՄ դիտորդական առաքելություն տեղակայելուն:

ՀԱՆԴԻՊԵԼ Է ՇՎԵՅՑԱՐԱՑԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻՆ

Հոկտեմբերի 14-ին ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանը հանդիպել է Շվեյցարիայի խորհրդարանի պատվիրակության հետ: Պատվիրակության կազմում էին հայ-շվեյցարական բարեկամության խմբի անդամ Շտեֆան Մյուլեր Ալտերմատը, դաշնային պատգամավոր Միշել Մատերը, ՀՀ-ում Շվեյցարիայի դեսպան Լուկաս Ռոզենկրացը եւ հայ-շվեյցարական բարեկամության խմբի գլխավոր քարտուղար Սարգիս Շահինյանը:

ԱԺ գրասենյակից հայտնում են, որ ԱԽ քարտուղարը ներկայացրել ՀՀ ինքնիշխան տարածքի նկատմամբ Ադրբեջանի կողմից սանձազերծված վերջին ագրեսիան եւ դրա հետեւանքները: Գրիգորյանն ընդգծել է, որ Ադրբեջանի այս գործողությունները նաեւ հարձակում է՝ ուղղված Հայաստանի ժողովրդավարությանը:

Շտեֆան Մյուլեր Ալտերմատն ընդգծել է, որ Շվեյցարիան հաստատակամ է՝ նպաստելու Հայաստանում ժողովրդավարական ինստիտուտների զարգացմանը: Այս համատեքստում պարոն Մյուլեր Ալտերմատը բարձր է գնահատել Հայաստանում անցկացված խորհրդարանական եւ համայնքային ժողովրդավարական ընտրությունները:

Հանդիպման շրջանակներում զրուցակիցները նաեւ քննարկել են ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ համագործակցությանն առնչվող հարցերի լայն շրջանակ՝ ներառյալ տնտեսական համագործակցության ընդլայնման հեռանկարներն ու հնարավորությունները:

ԻՐԱՎԱԿԱՆ

ԱԱԾ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ

60 ՀԱԶԱՐ ԴՈԼԱՐԻ ԿԱՇԱՌՔ

Կոռուպցիայի հակազդման ուղղությամբ տարվող հետեւողական աշխատանքների շրջանակներում ՀՀ ազգային անվտանգության ծառայության, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի եւ ՀՀ ֆինչական կոմիտեի կողմից համատեղ իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների եւ ֆինչական գործողությունների արդյունքում բացահայտվել է ՀՀ ֆինչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի կողմից առանձնապես խոշոր չափի կաշառք պահանջելու եւ ստանալու դեպք:

Մասնավորապես, ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում ՀՀ քննչական կոմիտեից ստացված տվյալների հիման վրա ձեռնարկված բազմաբնույթ եւ արդյունավետ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ Վ.Ա-ն, զբաղեցնելով ՀՀ քննչական կոմիտեի հատուկ հանձնարարություններով գործերի քննության վարչության հատկապես կարեւոր գործերով քննիչի պաշտոնը, իր ծառայողական լիազորություններով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, ՀՀ քննչական կոմիտեում իրականացվող քրեական վարույթով նախաքննության ընթացքում խարդախության մեջ մեղադրվող ամուսիններ Ա.Հ-ի եւ Ա. Ջ-ի օգտին գործողություններ կատարելու, մասնավորապես՝ նրանց քրեական հետապնդումը դադարեցնելու եւ քրեական վարույթը կարճելու համար 2021 թվականի սեպտեմբերի 23-ից հետո Գ.Մ-ի օժանդակությամբ մաս-մաս պահանջել եւ ստացել է առանձնապես խոշոր չափերով՝ ընդհանուր 24.738.798 ՀՀ դրամին համարժեք 60.900 ԱՄՆ դոլար կաշառք:

Նույն միջոցառումների արդյունքում պարզվել է նաեւ, որ Վ.Ա.-ն, իր ծառայողական լիազորություններով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, Կ.Խ-ի թոռան օգտին գործողություններ կատարելու, այն է՝ պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից ազատելու համար պահանջել եւ ստացել է խոշոր չափերով՝ 2.031.100 ՀՀ դրամին համարժեք 5.000 ԱՄՆ դոլար կաշառք:

Պարզվել է նաեւ, որ 2022 թվականի հուլիսի 22-ին Մասիս-Այնթապ ավտոճանապարհին նույն գործով մեղադրյալ Ա.Հ-ի վարած ավտոմեքենայով կատարված մահվան ելքով վրաերթի դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեում իրականացվող քրեական վարույթի նախաքննության ընթացքում Վ.Ա-ն, ի վնաս պետական եւ ծառայողական շահերի օգտագործելով իր ծառայողական լիազորություններով պայմանավորված ազդեցությունը, կաշառք-գումարի դիմաց միջամտել է նախաքննությանը, որի արդյունքում Ա.Հ-ի նկատմամբ ընտրվել է անազատության հետ չկապված խափանման միջոց, որով էական վնաս է պատճառվել պետության օրինական շահերին, այն է՝ խաթարվել է արդարադատության շահը:

Վերը նշված դեպքերի առթիվ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, 436-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 435-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 436-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով եւ 441-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնվել է քրեական վարույթ, որի շրջանակներում ս.թ. հոկտեմբերի 13-ին ՀՀ ազգային անվտանգության ծառայության եւ Հակակոռուպցիոն կոմիտեի աշխատակիցների կողմից իրականացված համակարգված քննչական գործողությունների արդյունքում Վ. Ա-ն, Ա. Հ-ն, Ա. Ջ-ն, Կ. Խ-ն եւ Գ. Մ-ն բերման են ենթարկվել ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե եւ ձերբակալվել են:

ՅՈՒՐԱՑՐԵԼ Է

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Հարություն Երվանդի Վարդումյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, 2008 թվականի հոկտեմբերի 31-ից մինչ օրս զբաղեցնելով «Երեւանի Մալաթիա-Սեբաստիա մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ-ի տնօրենի պաշտոնը, ծառայողական լիազորություններն օգտագործելով, ունենալով մեկ միասնական դիտավորություն հափշտակելու Երեւանի քաղաքապետարանի կողմից իրավաբանորեն ազատ կամքով հանձնված առանձնապես խոշոր չափերի՝ 25.187.484 (քսանհինգ հարյուր ութսունյոթ հազար չորս հարյուր ութսունչորս) ՀՀ դրամ գումարը, օրինական հիմքերով իր կողմից ղեկավարվող ՀՈԱԿ-ում գրանցված, սակայն փաստացի աշխատանքի չհաճախող Վարդան Աբրահամյանի օժանդակությամբ, հօգուտ վերջինիս, հափշտակել է 4.035.314 ՀՀ դրամ, Մշոն Աճեմյանի օժանդակությամբ, հօգուտ վերջինիս, հափշտակել է 3.403.499 ՀՀ դրամ, ՀՈԱԿ-ի փոխտնօրեն Ալեքսան Հովհաննիսյանի հոր՝ Մարզպետ Հովհաննիսյանի օժանդակությամբ, հօգուտ վերջինիս, հափշտակել է 63.400 ՀՀ դրամ, մայրիկի՝ Սաթիկ Վահագի Ֆերոյանի օժանդակությամբ, հօգուտ վերջինիս, հափշտակել է 4.118.360 ՀՀ դրամ, կնոջ՝ Անի Թելման Զոհրաբյանի օժանդակությամբ, հօգուտ վերջինիս, հափշտակել է 4.307.253 ՀՀ դրամ եւ վերջինիս հոր՝ Թելման Անդրանիկի Զոհրաբյանի օժանդակությամբ, հօգուտ վերջինիս, հափշտակել է 1.079.707 ՀՀ դրամ: Նույն ժամանակահատվածում իր կնոջ՝ Բելա Վարդումյանի օժանդակությամբ, հօգուտ վերջինիս, հափշտակել է 1.448.722 ՀՀ դրամ, Հարություն Նալբանդյանի օժանդակությամբ հափշտակել է 448.104 ՀՀ դրամ գումար, ինչպես նաեւ հափշտակել է Մշոն Պետրոսյանի անվամբ ելքագրված 5.845.339 ՀՀ դրամ գումարը՝ այն դարձնելով իրենը:

Միաժամանակ, հափշտակել է «Երեւանի Մալաթիա-Սեբաստիա մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ-ում գրանցված եւ փաստացի աշխատողներ հանդիսացող Գարիկ Բաղդասարյանի եւ Ալեքսանդր Ղամբարյանի ժամանակավոր բացակայության ընթացքում նրանց անվամբ փոխանցված համապատասխանաբար 170.884 ՀՀ դրամ եւ 266.902 ՀՀ դրամ գումար աշխատավարձները, որոնք նույնպես այն դարձրել է իրենը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԴԱՏԻ Է ՏՎԵԼ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական երրորդ բաժնի ՀԿԳ քննիչ Տարոն Ղարիբյանը դատի է տվել Քննչական կոմիտեին: Վերջինս պահանջում է, որ 11.08.2022թ. թիվ 1003-Ա հրամանն անվավեր ճանաչեն եւ, որպես հետեւանք, հայցվորին նախկին աշխատանքում վերականգնեն եւ վերջինիս միջին աշխատավարձի գումարը՝ պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար, բռնագանձեն: Ասել է թե՝ ՀԿԳ քննիչին ազատել են պաշտոնից, եւ նա այդ ազատումը վիճարկում է դատարանում:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է 5 ԱՆՁ

Սիմֆերոպոլի շրջանային դատարանը կալանավորել է Ղրիմի կամրջի վրա ահաբեկչական գործողության քրեական գործով անցնող հինգ անձանց. հաղորդում է «Ինտերֆաքսը»: Նշվում է, որ կասկածյալներին կալանավորել են մինչեւ դեկտեմբերի 8-ը: Դրանց թվում են Արտյոմ Ազատյանը, Գեորգի Ազատյանը, Ռոման Սոլոմկոն, Վլադիմիր Զլոբին, Արթուր Թերջանյանը: Հիշեցնենք, որ հոկտեմբերի 8-ին Ղրիմի կամրջի վրա բեռնատար է պայթել՝ փլուզելով ավտոմոբիլային ճանապարհի երկու թռիչքուղի: Պայթյունից զոհվել էր չորս մարդ: Ընդհանուր առմամբ ՌԴ քննչական կոմիտեն հաստատել է պայթյունի 12 մասնակցի: ԱԴԾ-ն հայտնել է ութ մարդու ձերբակալության մասին, որոնց թվում են հինգ ռուսաստանցի եւ Ուկրաինայի ու Հայաստանի երեք քաղաքացի:

ԽՈՒԼԻԳԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔ

ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչությունում նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում իրականացվում են քննչական եւ վարութային այլ գործողություններ՝ Արարատի մարզում գտնվող ռեստորանային համալիրում տեղի ունեցած խուլիգանության դեպքի բոլոր հանգամանքները պարզելու ուղղությամբ: ՔԿ-ից հայտնում են, որ, նախնական տվյալներով, 2022 թվականի հոկտեմբերի 12-ին՝ ժամը 23:55-ի սահմաններում, Արտաշատ-Մասիս ճանապարհին հարակից ռեստորանային համալիրի ավտոկայանատեղիում վիճաբանություն է տեղի ունեցել մի խումբ երիտասարդների միջեւ, որի ընթացքում նրանցից մեկի կանչով նշված վայր են ժամանել երկու անձ: Մոտենալով երիտասարդներին՝ նրանցից մեկը մի քանի կրակոց է արձակել, որից հետո նստելով «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենան՝ հեռացել են: Նախաքննության ընթացքում կատարված դեպքի վայրի զննությամբ հայտնաբերվել են ատրճանակի 3 հատ կրակված պարկուճ եւ արնանման հետքեր, վերցվել է հիշյալ ռեստորանային համալիրի տարածքի տեսանկարահանող սարքերի հիշողության պահպանման սարքը, հարցաքննվել են մի շարք անձինք: Քրեական վարույթի շրջանակներում 3 անձ ձերբակալվել է: Ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցառումներ՝ դեպքի բոլոր հանգամանքները, ենթադրյալ հանցագործությունը կատարած անձանց շրջանակը պարզելու, հանցագործության գործիքը հայտնաբերելու ուղղությամբ: Նախաքննությունը շարունակվում է:

● *Ըստ ՀՀ ոստիկանության՝ հոկտեմբերի 13-ից 14-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 56 դեպք, որոնցից 3-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՓԱԿԵԼ Է ԴՊՐՈՑԻ ԴՌՆԵՐԸ

Տավուշի մարզի Բերդ համայնքի սահմանամերձ Պառավաքար գյուղից լրագրողիս զանգահարած ծնողը բողոքեց, որ գյուղի միջնակարգ դպրոցի տնօրեն Նաիրա Ղայթմազյանն այս ուսումնական տարվա սկզբից՝ սեպտեմբերի 1-ից՝ ամեն առավոտ՝ ժամը 9-ից, փակել է տալիս դպրոցի դռները, եւ անգամ մի քանի րոպե ուշացած աշակերտները չեն կարողանում մտնել կրթօջախ: Դասից ուշացած աշակերտները հուսահատ նստում են դպրոցի դիմաց գտնվող պատին. նրանք այդ օրը չեն կարողանում մասնակցել դասերին: Կես ժամ քայլած, գյուղի ծայրին գտնվող իրենց տնից դպրոց հասած աշակերտը մի քանի րոպե ուշանալու պատճառով բաց է թողնում դասերը: Պառավաքարցի ծնողը հայտնեց, որ դպրոցի տնօրենը փակել է տալիս նաեւ դպրոցի բակ տանող դուռը, օրվա ընթացքում աշակերտները հնարավորություն չեն ունենում օգտվելու դպրոցի տարածքում գտնվող ցայտաղբյուրից, ստիպված ջուր են խմում դպրոցի շենքում գտնվող զուգարանի ծորակից, ինչից աշակերտները դժգոհում են: Ն. Ղայթմազյանը 3 անգամ անընդմեջ մասնակցել է դպրոցի տնօրենի թափուր պաշտոնի համար անցկացված մրցույթներին: Նա Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանի որոշումով 2022թ. մարտի 9-ին նշանակվել է Պառավաքարի միջնակարգ դպրոցի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը, հիմք ընդունելով Պառավաքարի միջնակարգ դպրոցի կառավարման խորհրդի 2022թ. հունիսի 14-ի թիվ 8 արձանագրությունը, որոշել է Ն. Ղայթմազյանին հունիսի 16-ից նշանակել «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Էդիկ Մելքումյանի անվան Պառավաքարի միջնակարգ դպրոց հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առեւտրային կազմակերպության տնօրեն եւ նրա հետ հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով: Զանգահարեցի Պառավաքարի դպրոցի տնօրենին, Ն. Ղայթմազյանն ասաց, որ ինքը փորձում է Պառավաքարի դպրոցը դպրոց դարձնել, հայտնեց, որ ժամը 9-ից դպրոցի դռները փակելու որոշումը ինքը համաձայնեցրել է դպրոցի ծնողական խորհրդի հետ: Նրանից տեղեկացա, որ ինքն այս տարի դարձել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ, 2022 թվականի սեպտեմբերի 25-ին կայացած Բերդ խոշոր համայնքի ավագանու համամասնական ընտրություններում եղել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու թեկնածուների 58-հոգանոց ցանկի 21-րդ համարը: Նաիրա Ղայթմազյանը հուզվեց իմ հարցերից, ասաց, որ մինչեւ հիմա հավատում էր լրագրողի իմ անաչառությանը, սպառնաց, որ իմ կողմից սխալ բաներ գրվելու դեպքում ինքը կդիմի «համապատասխան օրգաններին»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՊԱՇՏՈՆԱՎԱՐՈՒՄ

ՎՏԱՆԳԻ ՏԱԿ Է ՎԱՐԿԱՆԻՇԸ

ՀՀ ԱԺ ոլեսական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի պաշտոնում ընտրելու համար առաջարկել էր «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության կողմից առաջադրված ՀՀ ԱԺ ոլեսահրավական հանձնաժողովի նախագահի տեղակալ Վահագն Հովակիմյանի թեկնածությունը: ՀՀ ԱԺ-ն 2022 թվականի հոկտեմբերի 7-ին հրավիրված Ազգային ժողովի արտահերթ նիստում քննարկել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի թեկնածու Վահագն Հովակիմյանի ընտրության հարցը:

ՀՀ ԱԺ-ի կողմից փակ գաղտնի քվեարկությամբ 65 կողմ ձայնով Վահագն Հովակիմյանն ընտրվել է ԿԸՀ նախագահ: Այս մասին հայտնել է ԱԺ հաշվիչ հանձնախմբի նախագահ Նարեկ Բաբայանը: Քվեարկությանը 107 պատգամավորից մասնակցել է 65-ը: Վահագն Հովակիմյանը, անձամբ մասնակցելով ԿԸՀ նախագահի պաշտոնում իր իսկ թեկնածության քվեարկությանը, խախտել է «Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները՝ այն է. «1. Պատգամավորի կողմից իր կամ իրեն փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվելը նշանակում է օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալը, Ազգային ժողովի որոշման, հայտարարության կամ ուղերձի նախագիծ ներկայացնելը, Ազգային ժողովում շրջանառության մեջ դրված հարցի վերաբերյալ առաջարկ ներկայացնելը, ինչպես նաեւ Ազգային ժողովի կամ նրա հանձնաժողովի նիստում ելույթ ունենալը, հարցեր տալը կամ քվեարկությանը մասնակցելը, որը թեեւ ինքնին օրինական է, սակայն պատգամավորը տեղյակ է կամ պարտավոր էր տեղյակ լինել, որ այն հանգեցնում կամ նպաստում է կամ ողջամտորեն կարող է հանգեցնել կամ նպաստել նաեւ՝ (…) պաշտոնում իր ընտրությանը կամ նշանակմանը, բացառությամբ սույն օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասում նշված պաշտոնների, ինչպես նաեւ որպես Ազգային ժողովի կողմից ընտրվող պաշտոնում թեկնածու՝ իր ելույթի»: Խիստ անընդունելի է, որ ԿԸՀ նախագահի պաշտոնում «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունն ընտրել է խմբակցության անդամ Վահագն Հովակիմյանին, որը դեռեւս չսկսած իր պաշտոնավարումը, այս քվեարկությանը մասնակցելով՝ թույլ է տալիս շահերի բախում: Վահագն Հովակիմյանը, լինելով պատգամավոր, միաժամանակ ընտրվում է ԿԸՀ նախագահի պաշտոնում՝ օգտագործելով իր պատգամավորական լիազորությունները իրեն այդ պաշտոնում հաստատապես ընտրելու համար՝ ՔՊ միասնական ձայներին ավելացնելով իր վճռորոշ ձայնը (ընտրության համար անհրաժեշտ է եղել առնվազն 65 ձայն): Նման գործընթացով Վահագն Հովակիմյանին ԿԸՀ նախագահի պաշտոնում ընտրելով՝ վտանգի տակ է դրվելու նոր ձեւավորված Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վարկանիշը՝ անկախ մյուս անդամների աշխատանքի որակից, ջանասիրությունից եւ անկողմնակալությունից: Վահագն Հովակիմյանի դրսեւորած վարքագիծը անընդունելի է ակնկալվող հանրային բարձր հեղինակություն վայելող եւ սահմանադրական մարմնի ղեկավարի պաշտոնը զբաղեցնող անձի համար, ստվերում է ԿԸՀ ձեւավորման գործընթացը եւ կառույցի հեղինակությունը, խաթարում է հանրային վստահությունը դրա նկատմամբ: Ի լրումն սույն թվականի հոկտեմբերի 4-ի մի խումբ հասարակական կազմակերպությունների կողմից «Իշխող քաղաքական կուսակցության կողմից ԿԸՀ նախագահի պաշտոնում կուսակցական անդամին նշանակելու մոտեցման դատապարտման մասին» հայտարարությանը՝ անհրաժեշտ ենք համարում դիմել ՀՀ Ազգային ժողովի բոլոր խմբակցություններին՝ ԱԺ պատգամավոր եւ ԿԸՀ նախագահի թեկնածու Վահագն Հովակիմյանի կողմից «Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» ՀՀ օրենքով պատգամավորի շահերի բախմանն առնչվող պահանջների խախտման հարցը քննարկելու նպատակով ԱԺ պատգամավորական էթիկայի հարցերով ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու վերաբերյալ նախագիծ ներկայացնելու կոչով: Ներքոստորագրյալ հասարակական կազմակերպությունները խստորեն դատապարտում են «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության կողմից սահմանադրական մարմինների բարձրագույն պաշտոններում բարեվարքության նման հատկանիշներ դրսեւորող քաղաքական պաշտոնյաների առաջադրումը եւ շահերի բախման պայմաններում պաշտոններում ընտրությունը. դրանք ի չիք են դարձնում կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ հանրության ընկալումների դրական միտումները եւ հանգեցնում զգալի ռիսկերի՝ կոռուպցիայի տարածման, նոր ձեւավորվող ժողովրդավարական հիմքերի ամրապնդման ու ընտրական ինստիտուտների կայացման գործում: «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ

Իրավունքի զարգացման եւ պաշտպանության հիմնադրամ
«Ռեստարտ» գիտակրթական հիմնադրամ
«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ
«Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» ՀԿ
Իրազեկ քաղաքացիների միավորում

ԼՈՒՐԵՐ

ՊԵԿ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

Պետական եկամուտների կոմիտեն շինարարության ոլորտի եւ հատուկ հսկողություն պահանջող խոշոր հարկ վճարողների հարկային կարգապահության բարելավման ծրագրերի շրջանակում 2022 թ. 3-րդ եռամսյակի ընթացքում բացահայտել է աշխատողի չձեւակերպման ու ՀԴՄ-ի կիրառման կանոնների խախտման դեպքեր:

Ռիսկերի խորհրդի կողմից ընտրված տնտեսական գործունեության առանձին ոլորտներում գործունեություն ծավալող հարկ վճարողների մոտ իրականացվել է կարգապահական վարքագծի վերլուծություն: Արդյունքում շինարարության ոլորտում գործունեություն իրականացնող 16 հարկ վճարողների մոտ արձանագրվել է աշխատողի չձեւակերպման 16 խախտման դեպք, իսկ հատուկ հսկողություն պահանջող խոշոր 81 հարկ վճարողների մոտ արձանագրվել է աշխատողի չձեւակերպման 17 խախտման դեպք եւ ՀԴՄ-ի կիրառման կանոնների խախտման 65 դեպք:

Նշենք, որ Պետական եկամուտների կոմիտեի հարկային եւ մաքսային կարգապահության բարելավման ռազմավարության դրանից բխող միջոցառումների արդյունավետ եւ օպերատիվ իրականացման ապահովումը համակարգվում է Ռիսկերի խորհրդի կողմից:

ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի հրամանով հաստատված հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված եւ հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2022-2023 ուսումնական տարիների օրինակելի ուսումնական պլաններում սահմանվել են դպրոցականների արձակուրդների օրերը: Ինչպես հայտնում են ԿԳՄՍ նախարարությունից, 2022-2023 ուսումնական տարում 3-12-րդ դասարանների սովորողներին տրվում են արձակուրդներ՝ աշնանային՝ 2022 թ. հոկտեմբերի 24-30-ը ներառյալ, ձմեռային՝ 2022 թ. դեկտեմբերի 26-ից 2023 թ. հունվարի 8-ը ներառյալ, գարնանային՝ 2023 թ. մարտի 27-ից ապրիլի 2-ը ներառյալ:

Առաջին դասարանցիների աշնանային արձակուրդը տրվում է 2022 թ. հոկտեմբերի 17-30-ը ներառյալ, ձմեռայինը՝ 2022 թ. դեկտեմբերի 26-ից 2023 թ. հունվարի 22-ը ներառյալ, գարնանայինը՝ 2023 թ. մարտի 20-ից ապրիլի 2-ը ներառյալ:

Երկրորդ դասարանցիների աշնանային արձակուրդը տրվում է 2022 թ. հոկտեմբերի 24-30-ը ներառյալ, ձմեռայինը՝ 2022 թ. դեկտեմբերի 26-ից 2023 թ. հունվարի 22-ը ներառյալ, գարնանայինը՝ 2023 թ. մարտի 27-ից ապրիլի 2-ը ներառյալ:

Ըստ ուսպլանի՝ ԿԳՄՍ նախարարությունն անհաղթահարելի ուժի առաջացման դեպքում (եղանակային անբարենպաստ պայմաններ, սուր վարակիչ հիվանդությունների տարածում, տարերային աղետ եւ այլն) կարող է սահմանել լրացուցիչ արձակուրդ՝ կատարելով փոփոխություններ ուսումնական պարապմունքների եւ սովորողների համար սահմանված արձակուրդների ժամանակացույցներում: Այդ փոփոխությունները կարող է կատարել նաեւ ուսհաստատությունը՝ բաց թողնված ժամերը մինչեւ ուսումնական պարապմունքների ավարտը լրացնելու կամ ուսումնական պարապմունքները հեռավար եղանակով կազմակերպելու՝ լիազոր մարմնին տեղեկացնելու պայմանով:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանում արձանագրվել է 13 ճՏՊ. 17 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ՊԵՂՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

««Լոռի բերդ» քաղաքատեղի» պատմամշակութային արգելոցի տարածքում ընթացող պեղման աշխատանքների ժամանակ մեծ թվով ջնարակված թասիկների ու պնակների բեկորներ են հայտնաբերվել: «Պատմամշակութային արգելոց-թանգարաններ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ից հայտնում են, որ հնագիտական նյութը թվագրվում է 11-13-րդ դդ.-ին: Արշավախմբի ղեկավար Արման Նալբանդյանի խոսքով՝ հոյակապ այս խեցեղենը բացվել է ամրոցի պարսպապատին հարող տարածքում՝ կիսաշրջանաձեւ խորշի մեջ, որ, ամենայն հավանականությամբ, տնտեսական նշանակության կառույց է եղել: Դրանք երբեմն բացվում էին իրար կողք շարված, եւ ակնհայտ է, որ իրենց նախնական տեղում են: Հետագայում, ծածկվելով հողի հաստ շերտով ու փլատակներով, երկար դարեր մնացել են անհայտ:

Զարգացած միջնադարի այս հոյակապ նմուշները ցույց են տալիս Լոռե ամրոցում մշակութային բարձր զարգացվածության աստիճանը, որն իր զուգահեռներն ունի Անիում եւ Դվինում: Հայտնաբերված խեցեղենը ունի նուրբ գույների գեղեցիկ համադրությամբ արված երկրաչափական ու բուսական սիմետրիկ զարդանախշեր, իսկ մոտ 15 թասեր կրում են թռչունների (կաքավներ) պատկերներ: ««Լոռի բերդ» քաղաքատեղի» պատմամշակութային արգելոցի տարածքում պեղումներն իրականացնում է «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ի արշավախումբը (ղեկ.՝ Արման Նալբանդյան)՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության հատկացրած առանձին դրամաշնորհով:

ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ՕԲՅԵԿՏ

ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Երեւանի կենտրոնի տեսուչները վերահսկողություն են իրականացրել անհատ ձեռնարկատեր Արտակ Խաչատրյանին պատկանող հանրային սննդի օբյեկտում (ք. Երեւան, Նորք-Մարաշ) եւ պարզել, որ վերջինս գործում է սանիտարահիգիենիկ խախտումներով,

մասնավորապես՝

- առաստաղները նախագծված եւ կառուցված չեն այնպես, որ կանխարգելվի կամ նվազեցվի կեղտի կուտակումը, գոլորշու խտացումը, անցանկալի բորբոսների աճը եւ մասնիկների թափվելու հնարավորությունը,
- աշխատանքային մակերեւույթների մի մասը՝ներառյալ սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվողները, պատրաստված չեն քայքայամաշման (կոռոզիայի) չենթարկվող նյութերից,
- սարքավորումների մի մասը, որոնք անմիջական շփման մեջ են գտնվում սննդամթերքի հետ, կառուցված չեն հիգիենայի պահանջները բավարարող նյութերից, որպեսզի աղտոտման ցանկացած վտանգ հասցվի նվազագույնի:

ՍԱՏՄ ղեկավարի որոշմամբ՝ հանրային սննդի օբյեկտի գործունեությունը կասեցվել է, սահմանվել է ժամկետ խախտումները վերացնելու համար:

2022-2023 ՈՒՍՏԱՐԻ

ՕԼԻՄՊԻԱԴԱՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի հրամանով հաստատվել են դպրոցականների՝ 2022-2023 ուսումնական տարվա «Մաթեմատիկա», «Ֆիզիկա», «Աստղագիտություն», «Կենսաբանություն», «Ինֆորմատիկա», «Քիմիա» եւ «Աշխարհագրություն» առարկաների օլիմպիադաների անցկացման ընթացակարգերը, ինչպես նաեւ առարկայական օլիմպիադաների մարզային (Երեւանի քաղաքային) եւ հանրապետական փուլերի ժամկետները:

ԿԳՄՍՆ-ից հայտնում են, որ դպրոցականների օլիմպիադաները կազմակերպվում են երեք՝ առաջին (դպրոցական), երկրորդ (մարզային) եւ երրորդ (հանրապետական) փուլերով, որոնք անցկացվում են համապատասխան խմբերով՝ ըստ դասարանների: Օլիմպիադայի բոլոր փուլերի տարբերակները՝ ըստ խմբերի, կազմում է հանրապետական առարկայական հանձնաժողովը:

Առաջին փուլն անցկացվում է դպրոցում, որին կարող է մասնակցել ցանկացած սովորող՝ այդ մասին տեղեկացնելով դպրոցի տնօրինությանը: Օլիմպիադայի առաջին փուլն անցկացվում է 2022թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին: Դպրոցականների օլիմպիադայի առաջին փուլի արդյունքները չեն բողոքարկվում:

Երկրորդ փուլն անցկացվում է մարզպետարանների (Երեւանի քաղաքապետարանի) սահմանած վայրում 2023թ. հունվար-փետրվար ամիսներին: Հանրապետական կազմկոմիտեի որոշման համաձայն՝ երկրորդ փուլին մասնակցում են առաջին փուլում լավագույն արդյունքներ ցուցաբերած աշակերտները: Օլիմպիադայի երկրորդ փուլի աշխատանքների արդյունքների բողոքարկումը կատարվում է օլիմպիադայի անցկացման վայրում առարկայական հանձնաժողովի նշանակած ժամին: Երկրորդ փուլի հաղթողները պարգեւատրվում են մարզպետարանների (Երեւանում՝ քաղաքապետարանի) դիպլոմներով եւ գովասանագրերով:

Նշենք նաեւ, որ «Կենսաբանություն» առարկայի օլիմպիադային մարզային փուլն անցկացվում է տեսական եւ գործնական փուլերով:

Երրորդ փուլն անցկացվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության սահմանած վայրում 2023թ. փետրվարի 17-ից մինչեւ մայիսի 15-ը: Երրորդ փուլին մասնակցում են երկրորդ փուլում լավագույն արդյունքներ ցուցաբերած մասնակիցները՝ համաձայն հանրապետական կազմկոմիտեի որոշման: Օլիմպիադայի երրորդ փուլի աշխատանքների արդյունքների բողոքարկումը կատարվում է օլիմպիադայի անցկացման վայրում առարկայական հանձնաժողովի նշանակած ժամին: Երրորդ փուլի մասնակիցներին տրվում են օլիմպիադայի մասնակցության հավաստագրեր, իսկ հաղթողները պարգեւատրվում են ՀՀ ԿԳՄՍ նախարարության դիպլոմներով: Օլիմպիադայի երրորդ փուլի 10-12-րդ դասարանների դիպլոմակիրները համարվում են միջազգային օլիմպիադաների ՀՀ թիմի հավակնորդներ:

«Ֆիզիկա», «Քիմիա», «Աշխարհագրություն» եւ «Կենսաբանություն» առարկաների օլիմպիադաների հանրապետական փուլերն անցկացվում են տեսական եւ գործնական, իսկ «Մաթեմատիկա» եւ «Ինֆորմատիկա» առարկաներինը՝ երկու տեսական փուլերով:

Դպրոցական օլիմպիադային մասնակցող աշակերտների անվանացուցակների ձեւանմուշները, առաջադրանքները, պատասխանները, արդյունքները եւ օլիմպիադայի վերաբերյալ այլ տեղեկությունները տեղադրվում են www.olymp.am եւ lib.armedu.am կայքերում:

ՆԱԽԱԳԾԵՐ

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՆ ԴՐՎԵԼ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձեւավորման, գործունեության եւ տնօրենի նշանակման եւ Պետական ուսումնական հաստատության համակարգողի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման եւ նշանակման կարգերի նախագծերը:

ԿԳՄՍՆ-ից հայտնում են, որ նախագծերի անհրաժեշտությունը բխում է «Հանրակրթության մասին» օրենքի փոփոխության պահանջից, որտեղ ամրագրված է ուսհաստատություններում կառավարման գործընթացի տարանջատումը տնօրենի եւ վարչատնտեսական մասի համակարգողի միջեւ:

Հաստատության ուսումնադաստիարակչական եւ վարչական գործընթացների կառավարումը վերապահվում են տարբեր ղեկավարների. ուսումնադաստիարակչական մասի գործադիր մարմինը տնօրենն է, իսկ վարչատնտեսական գործընթացի կառավարումն իրականացնում է վարչատնտեսական համակարգողը, որոնց լիազորությունների, պարտականությունների ու պատասխանատվության մասին դրույթները սահմանված են օրենքով: Տարանջատման արդյունքում ակնկալվում է արդյունավետ կառավարում՝ գործառույթների եւ պատասխանատվության հստակ բաշխմամբ:

Ուսումնական հաստատության կառավարման առաջարկվող նոր մոդելով վարչատնտեսական համակարգողն իրականացնում է դպրոցի վարչական, տնտեսական եւ ֆինանսական կառավարումը: Համակարգողը տնօրենի հետ իրականացնում է միայն ուսումնական գործընթացի պլանավորում եւ համապատասխանաբար անհրաժեշտ պայմանների ապահովում: Տնօրենը չի զբաղվում վարչական, տնտեսական եւ ֆինանսական հարցերով. նա իրականացնում է մանկավարժական աշխատողների մրցույթի կազմակերպման, ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորման գործընթացները:

Այսպիսով, ուսումնական հաստատության կառավարումը տարանջատելու արդյունքում գործադիր մարմին համարվող երկու ղեկավարները կզբաղվեն հավասարապես կարեւոր եւ աշխատատար գործառույթներով՝ դրանք իրականացնելով համագործակցային մեխանիզմով:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՆՈՐ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ

«ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՆՈՒՆ ԱՊԱԳԱՅԻ»

«Երաժշտություն՝ հանուն ապագայի» մշակութային հիմնադրամի Talentum կրթական եւ զարգացնող ծրագրի կրթաթոշակառուները համերգով ամփոփեցին 2021/2022 թվականների ծրագիրը:

Համերգային երեկոյին, որը տեղի ունեցավ հոկտեմբերի 12-ին Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը, ելույթ ունեցավ ծրագրի 11-18 տարեկան 15 կրթաթոշակառու:

Նրանք ներկայացրին հայ եւ օտարազգի համաշխարհային ճանաչում ունեցող կոմպոզիտորների ստեղծագործություններ:

«Կրթաթոշակառուները 150-ից ավելի վարպետության դասեր են անցել, ծանոթացել եւ մասնագիտական խորհուրդներ են ստացել հիսունից ավելի պրոֆեսորներից ու հանրահայտ երաժիշտներից, մասնակցել են օտար լեզուների դասընթացների Բրյուսովի անվան պետական համալսարանում, այցելել են թանգարաններ, մասնակցել են համերգների, իսկ այս երեկո նրանց հաշվետու համերգն է, որտեղ ներկայացնելու են այն հմտությունները, որոնք ձեռք են բերել այս մեկ տարվա ընթացքում»,- պատմեց հիմնադրամի տնօրեն Աննա Տեր-Հովակիմյանը:

Նա նշեց, որ ծրագրին մասնակցության հայտ է ներկայացրել 300 պատանի, սակայն ընտրվել է 15 մասնակից: Նրանք վարպետության դասեր են անցնել այնպիսի երաժիշտների մոտ, ինչպիսիք են թավջութակահարներ Միշա Մայսկին, Դմիտրի Յաբլոնսկին, ջութակահարներ Գիլ Շահամը, Դորա Շվարցբերգը, հոբոյահար Ալեքսեյ Օգրինչուկը, դաշնակահարներ Ալեքսեյ Ռոմանովսկին, Գլորիա Կամպաները եւ այլք:

Տեր-Հովակիմյանի խոսքով՝ ծրագրին մասնակցում են միայն ակադեմիական գործիքների կատարողները՝ դաշնակահարներ, ջութակահարներ, հոբոյահարներ, կլարնետահարներ, ֆլեյտահարներ, թավջութակահարներ:

Հիմնադրամի տնօրենը ծրագրի ձեռքբերումն է համարում հովանավորների աջակցությունը եւ հույս հայտնում, որ տարիների ընթացքում երաժշտությունը կարեւորող մեկենասների թիվը կավելանա:

Համերգի ավարտին պատանի երաժիշտներին հանձնվեցին «Երաժշտություն՝ հանուն ապագայի» մշակութային հիմնադրամի Talentum ծրագրի ավարտական վկայականներ:

«Երաժշտություն՝ հանուն ապագայի» մշակութային հիմնադրամը 2019 թվականին հիմնադրել է դիրիժոր Սերգեյ Սմբատյանը, որը եւ գլխավորում է հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատանքները: Հիմնադրամը հետապնդում է մշակութային հանրահռչակման եւ զարգացման նպատակներ: Այն ուղղված է կրթական, սոցիալական եւ մշակութային ծրագրերի իրականացմանը:

Հիմնադրամի առաքելությունն է բացահայտել, զարգացնել, կրթել եւ աջակցել տաղանդաշատ երաժիշտներին, մշակույթի եւ արվեստի ներկայացուցիչներին, մշակութային եւ կրթական հաստատություններին եւ կազմակերպություններին ամբողջ աշխարհում, տրամադրել կրթաթոշակներ, նյութական օժանդակություն շնորհալի երաժիշտներին, երգիչներին, արվեստի ներկայացուցիչներին, ապահովել նրանց մասնակցությունը միջազգային տարբեր երաժշտական փառատոներին, միջոցառումներին, մրցույթներին եւ երաժշտական ծրագրերին:

Հիմնադրամը ձգտում է նպաստել Հայաստանի եւ սփյուռքի հայկական մշակութային եւ կրթական կազմակերպությունների եւ անհատների միջեւ կապերի հաստատմանը եւ համագործակցությանը, հայկական մշակութային ներուժի համախմբմանը, հայկական մշակույթի, դասական երաժշտության կատարողական արվեստի զարգացմանը եւ տարածմանը Հայաստանում եւ երկրի սահմաններից դուրս:

«ԵՐԵՎԱՆԸ ԵՐԳՈՒՄ Է ՖՈՐՇԻ ՀԱՄԱՐ»

ԹԵ ԻՆՉՊԵՍ Է ՆՇՎԵԼ ԱՐՏԻՍՏԻ 55-ԱՄՅԱԿԸ

Երգիչ, երգահան, ՀՀ վաստակավոր արտիստ Ֆորշի 55-ամյակի առթիվ հոկտեմբերի 10-ին «Գվին» համերգասրահում տեղի է ունեցել «Երեւանը երգում է Ֆորշի համար» խորագրով համերգային երեկոն:

Համերգին Ֆորշին նվիրված կատարումներով հանդես են եկել Thea Orchestra-ն, Գոռ Սուջյանը, Արամոն, Էմմա Պետրոսյանը, Արթուր Իսպիրյանը, Շուշան Պետրոսյանը, Վահագն Հայրապետյանը, Արսեն Սաֆարյանը, Արամ MP3-ը, Սամսոն Մելիքյանը, Զարուհի Բաբայանը, Սրբուկը, Աղվան Պապոյանը, Արփին, Արտակ Ներսիսյանը, Լուկաս Մադոյանը, Հայկ Պետրոսյանը, Լեւոն Մալխասյանը, Ռադիկ Գաբրիելյանը եւ Խամաճիկների պետական թատրոնի արտիստները:

Հաղորդավար, դերասանուհի Ջառա Արամյանը, որը հյուրերից էր, իրեն այն երջանիկներից է համարում, որը երաժշտական դպրոցում նույն դասարանում է սովորել Ֆորշի, Գրիշա Աղախանյանի, Արամոյի հետ: «Լավ հիշում եմ այն շրջանը, երբ Վահանը դարձավ Ֆորշլագ, հետո՝ Ֆորշ: Ֆորշն ինձ համար սիրելի, հարազատ անձնավորություն է: Նրա յուրաքանչյուր երգ մեր սրտից է բխում եւ դիպչում է սրտին: Մենք սիրում ենք մեր քաղաքը, միմյանց նաեւ Ֆորշի երգերով»,-նշել է Արամյանն ու հավելել՝ Ֆորշը անհրաժեշտ է Երեւանին եւ պետք է միշտ Երեւանում լինի:

Հաղորդավար Արման Մարգարյանը ոչ միայն Ֆորշի երիտասարդ երկրպագուն է, այլեւ ընկերը: «Երբ փոքր երեխա էի, Ֆորշի երգերը ձայներիզներով էի լսում: Երբեք չէի հավատա՝ կգա մի օր, եւ մենք կընկերանանք: Երջանիկ եմ, որ նա մեր ավագ ընկերն է, Երեւանի Ֆորշն է, որին պետք է փայփայել ու լսել նրա երգերը»,- ասել է Մարգարյանը:

Երգչուհի Նառան Ֆորշին Երեւանի վառ գույներից է համարում: Կարծում է՝ Ֆորշը Երեւան քաղաքի կարեւոր մասն է: «Ցանկանում եմ, որ Ֆորշը լինի առողջ եւ երկար ստեղծագործական ճանապարհ անցնի»,-ընդգծել է Նառան:

Համերգը կազմակերպել են Երեւանի ավագանու անդամներ Արմեն Սարգսյանը եւ Նուարդ Վարդանյանը՝ փոխքաղաքապետ Տիգրան Ավինյանի աջակցությամբ:

Երեկոյին ներկայացվել է Ֆորշի 55-ամյակին նվիրված տեսաֆիլմ, ինչպես նաեւ բազում այլ անակնկալներ: Ֆորշը եւ «Ռե Մինոր» խումբը եւս հանդես են եկել կատարումներով:

ԼՈՒՐԵՐ

ՆՈՐ ԵՐԳ

Բրիտանական Queen ռոք խումբը թողարկել է Face It Alone երգը, որը հիմնված է Ֆրեդի Մերկուրիի՝ 1988 թվականի դեմոձայնագրության վրա: Երգը ստեղծվել է այն ժամանակ, երբ երաժիշտներն աշխատում էին The Miracle ալբոմի վրա: Այս մասին հայտնում է «ՏԱՍՍ»-ը:

Հարցազրույցում Queen-ի անդամներ Բրայան Մեյը եւ Ռոջեր Թեյլորը նշել են, որ չեն հավատում հին ձայնագրությունը վերականգնելու հնարավորությանը, սակայն հաճելիորեն զարմացած են ստացված երգի հուզիչ արդյունքից: «Մենք Ֆրեդիից գտանք մի փոքրիկ գոհար, որի մասին փոքր-ինչ մոռացել էինք: Դա իսկական բացահայտում էր»,- ասել են նրանք:

Face It Alone թրեքը կներառվի Queen-ի առաջիկա ալբոմում, որում ունկնդիրներին կներկայացվեն նաեւ երաժիշտների երկխոսությունների ձայնագրությունները:

Queen խմբի մենակատար Ֆրեդի Մերկուրին մահացել է 1991 թվականի նոյեմբերի 24-ին: Չնայած դրան՝ թիմը շարունակում է գոյություն ունենալ: Նոր կազմում, բացի Մեյից ու Թեյլորից, ընդգրկված են Փոլ Ռոջերսն ու Ադամ Լամբերտը:

ՄԵԿՆԱԲԱՆԵԼ Է

Իտալական «Ռոմայի» պորտուգալացի գլխավոր մարզիչ Ժոզե Մոուրինյոն մեկնաբանել է իսպանական «Բետիսի» հետ 1:1 հաշվով ոչ-ոքի արդյունքը Եվրոպայի լիգայի խմբային փուլի չորրորդ տուրում:

«Փլեյ-օֆֆի խաղ էր: Եթե պարտվեինք, կկորցնեինք խմբից դուրս գալու հնարավորությունը: Առաջին խաղակեսում 0:1 հաշվով պարտվելը իսկական ճնշում է, որը չէր զգացվի առաջնության սովորական խաղում:

Մենք ունեինք բազմաթիվ խնդիրներ, վնասվածքներ, որակազրկումներ, հոգնածություն, իսկ մրցակիցը, նախորդ հանդիպման համեմատ, ութ փոփոխություն էր կատարել եւ ներկայացրել թարմ կազմ: Մեր դրսեւորած կիրքը թույլ տվեց երկրորդ խաղակեսում խփել պատասխան գոլը եւ խուսափել պարտությունից:

Մնացել է երկու հանդիպում: Պետք է հաղթել, այլապես դուրս կմնանք: Լավ է, որ ամեն ինչ կախված է մեզնից»,- Մոուրինյոյի խոսքը մեջբերում է Sky Sport Italia-ն:

Անցած տուրում «Ռոման» տանը 1:2 հաշվով պարտվել էր «Բետիսին»:

«Բետիսը» 10 միավորով գլխավորում է մրցաշարային աղյուսակը, «Ռոման» երրորդն է՝4 միավոր: Նույնքան միավոր ունի երկրորդ տեղում գտնվող բուլղարական «Լուդոգորեցը», որը մեկ հանդիպում քիչ է անցկացրել:

● *Հոկտեմբերի 16-ին «Կայարան» թատրոնում տեղի կունենա «Թռի-վռի մի ճպուռ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-1500 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱԾՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

Հարց. Ո՞r հաcվեհամարին պեsf է փոխանցել պետական տուրքը եւ ի՞նչ ժամկետներում:

(Տաթեւիկ Հայաթյան, 36 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Դեղատնային գործունեություն՝ 900005016648:

Բժշկական օգնություն եւ սպասարկում՝ 900005016614:

Դեղերի արտադրություն՝900005016630:

Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դրանց պրեկուրսորների արտադրության, արտահանման, ներմուծման կամ մեծածախ առեւտրի իրականացում: Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի արտադրության կամ առեւտրի, արտահանման կամ ներմուծման, իչպես նաեւ թմրամիջոցների եւ հոգեմետ /հոգեներգործուն/ նյութերի գիտական եւ ուսումնական նպատակներով օգտագործման եւ այդ նյութերի օգտագործմամբ փորձաքննության անցկացման լիցենզիա տալու համար՝900005160339:

Դեղերի մեծածախ իրացում՝900005001574:

Արտադրական կանեփի արտադրություն, ներմուծում, արտահանում կամ մեծածախ առեւտրի իրականացում՝900005002390:

ՀՀ առողջապահության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ».Հերթական տարում վճարումը պետք է իրականացվի մինչեւ լիցենզիայի վրա նշված ամսաթվի ավարտը:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Կարո՞ղ է արդյոք ավանդի փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող մահացած անձի փոխարեն գումարը վճարվել մեկ այլ անձի:

(Աննա Չիտչյան, 65 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ավանդի փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող անձի գումարը կարող է վճարվել ժառագության իրավունքը ճանաչած անձին, եթե ավանդատուի տվյալները ընդգրկվել են տվյալ ամսվա փոխհատուցման վճարման ցուցակում եւ նա մահացել է վճարման ցուցակների ձեւավորման օրվա եւ դրան հաջորդող օրերի ընթացքում:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ավանդների փոխհատուցումը վճարվում է Հայփոստի բաժանմունքի սպասարկող անձի կողմից (փոստատար) տուն առաքելու միջոցով (ավանդատուի պահանջով այն կարող է վճարվել նաեւ բաժանմունքում)՝ համաձայն հաստատված ժամանակացույցի եւ ըստ փոստատարների համար սահմանված երթուղու:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Հոկտեմբերի 13-ին Երեւանի Նոր Նորք վարչական շրջանի Մոլդովական 29/5 շենքի բակում տեղի ունեցավ Արցախյան 44-օրյա պատերազմում նահատակված, լեգենդ դարձած հերոս Կամո Շահբազյանի հիշատակը հավերժացնող խաչքարի եւ ցայտաղբյուրի բացման արարողությունը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **14.10.2022**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: